*Հավելված N 2*
*2025 թվականի հունվարի 15-ին կնքված*
*«1032-11003/25-ԾՑ3» պայմանագրի*

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 3

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Ծրագրի անվանում | Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրում սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնում (Գյումրի) |
| Դրամաշնորհի N | *«1032-11003/25-ԾՑ3»* |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ԱՍՀՆ |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Հայկական Կարիտաս» ԲՀԿ |
| Ծրագրի իրականացման ժամանակահատված | 03.01.2025 - 31.12.2025 |
| Հաշվետու ժամանակահատված | 01.07.2025-30.09.2025 |
| Ներկայացման օր | 07.10.2025 |
| Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն) | Տիգրանուհի Տարախչյան, ծրագրի ղեկավար |

2. Բովանդակային հաշվետվություն

2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

**Ծրագրի շրջանակներում նախատեսված է տարեցներին տրամադրել հետևյալ ծառայությունները՝**

- Շահառուների անհատական սոցիալական ծրագրերում համապատասխան գրանցումների կատարում,
- Ուղղորդում, ուղեկցում և համապատասխան աջակցության ցուցաբերում,
- Օրական մեկանգամյա սննդի տրամադրում՝ (շաբաթական 5 օր),
- Բուժքույրական խնամքի, խորհրդատվության և աջակցության տրամադրում, ներառյալ դեղորայք՝ ըստ կարիքի,
- Շահառուների հիգիենիկ խնամքի կազմակերպում, որը ներառում է լոգանքի և լվացքի ծառայությունների մատուցում,

- Շահառուների նոր նախասիրությունների բացահայտում, խմբակների աշխատանքի իրականացում՝ հաշվի առնելով շահառուների ցանկությունները և հետաքրքրությունները,
- Զբաղվածության և ժամանցի կազմակերպում միջոցառումների, ինտելեկտուալ և ժամանցային խաղերի միջոցով /տոների և հիշարժան օրերի նշում/:

2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացը՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ հիմնական գործողությունները՝

- Կատարվել է շահառուների անհատական սոցիալական ծրագրերում համապատասխան գրանցումներ:
- Շահառուներին տրամադրվել է խորհրդատվություն և աջակցություն՝ սոցիալական խնդիրները լուծելու նպատակով:
- Աջակցություն է ցուցաբերվել 3 շահառուի՝ նպաստի և աջակցության փաստաթղթերի պատրաստման գործում:
- Շահառուներին տրամադրվել է սոցիալ-իրավական և սոցիալ-հոգեբանական խորհրդատվություն, որի շնորհիվ լուծվել են նրանց ընտանեկան կոնֆլիկտները:
- Շահառուները ուղեկցվել են պոլիկլինիկա, բանկ և ՄՍԾ:
- Կատարվել են զանգեր և 3 հասցեական տունայց՝ բացակա շահառուների մասին տեղեկություններ ստանալու նպատակով:
- Շահառուներին տրամադրվել է ամենօրյա սնունդ՝ ըստ նախապես մշակված սննդակարգի:
- Շահառուներին տրամադրվել է բուժքույրական խնամք, խորհրդատվություն և աջակցություն՝ ներառյալ դեղորայք:
- Շաբաթական 2 անգամ անցկացվել են թերապևտիկ վարժանքներ հատուկ մարզասարքերով:
- Ապահովվել է տարեցների անձնական հիգիենան ու խնամքը: Տրամադրվել է բաղնիք հաճախելու 122 տոմս: Շահառուները օգտվել են լվացքատան ծառայությունից: Լվացվել և արդուկվել են 22 տարեցի անկողնային պարագաները:
- Ապահովվել է շահառուների զբաղվածությունը խմբակների միջոցով՝

➤ «Ֆիզ-արտ» խմբակը շարունակել է իր ակտիվ աշխատանքները 15 տարեցի հետ: Խմբակի գործունեության ընթացքում կատարվել են հետևյալ գործողությունները տարբեր թերապիաների միջոցով /արտթերապիա, դրամաթերապիա, իզոթերապիա, ֆիզիոթերապիա, մանդալաթերապիա/: Եռամսյակի ընթացքում շաբաթական 5 օր, 15 շահառուի հետ կատարվել են ֆիզիոթերապևտիկ վարժություններ, որի շնորհիվ

փոխվել է շահառուների կեցվածքը, կարգավորվել է իմունային համակարգը: Մանդալաթերապիայի սեանսեր են անցկացվել 15 անգամ 14 շահառուի հետ: Ռիթմոթերապիայի սեանսեր են անցկացվել 7 անգամ՝ 15 շահառուի հետ: Հոգեբանական թեստերի, հիշողության խաղերի անցկացում, հիշողության մարզանք՝ թվերով, բառակապակցություններով, ասոցատիվ թեստերով: Գնդակներով խաղային մրցույթ՝ ուշադրության, հիշողության, ուղեղի երկու կիսագնդերի ակտիվացման համար: Եռամսյակի ընթացքում անցկացվել է 12 սեանս 15 շահառուի հետ:
Ծեփագործություն՝ պլաստիլինի միջոցով պատկերների ստեղծում, որի շնորհիվ զարգանում է մանր մոտորիկան, կատարել ենք 4 անգամ՝ 13 շահառուի հետ:

- «Ստեղծագործող ձեռքեր» խմբակը շարունակել է իր ակտիվ աշխատանքները 16 տարեցի հետ: Եռամսյակի ընթացքում մաքրամեից, հուլունքներից և հելյունից պատրաստվել է հետևյալ իրերը՝ բու վզնոց (23 հատ), կախազարդ՝ (150 հատ) թևնոց (129 հատ): Գործվածքից կախազարդեր՝ ծաղիկ (23հատ), մրգեր (18 հատ): Ցուցադրվել է նաև տեսանյութեր՝ տեխնոլոգիաների ուսումնասիրման նպատակով:
- «Հրաշագործները» խմբակը շարունակել է իր ակտիվ աշխատանքները 13 տարեցի հետ: Շահառուներին ներկայացվել են նոր զարդանախշեր, տեսական և գործնական գիտելիքներ: Պատրաստվել են մագնիսներ՝ դրոշ (60 հատ), սմայլիկ (35 հատ), բաժակի տակդիրներ՝ ծմերուկ (5 հատ), ելակ (5 հատ), նարինջ (5 հատ), ավոկադո (1 հատ), կենդանիների թաթեր (20 հատ), կախազարդեր՝ (75 հատ) :
- Երգի խմբակի կամավոր խմբավարը շարունակել է աշխատել 7 հոգանոց խմբի հետ: Սովորել և ներկայացրել են 16 երգ:

Շահառուների ժամանցն ապահովելու համար կատարվել են հետևյալ գործողությունները՝

- Անցկացվել են ինտելեկտուալ խաղեր և հոգեբանական թեստեր: «Զիջել թե վիճել», «Բառաքամոցի և նոր բառերի ստեղծում», խաղ՝ հարցերի միջոցով-մանկության և երիտասարդության տարիների հետաքրքիր դրվագների վերլուծություն», «Շուտ ասա», «Այլ կերպ», «Զգա, պատկերացրու, ասա»:
- Կազմակերպվել է միջոցառում Հայաստանի անկախության տոնին նվիրված, նշվել են հիշարժան օրերը՝ «Շախմատի միջազգային օր», «Սրտի միջազգային օր», «Սուրճի միջազգային օր»: Անցկացվել են միջոցառումներ նվիրված՝ Հայաստանի անկախության 34-ամյակին, Կոմիտասի 156-ամյակին: Միջոցառումների ավարտին ցուցադրվել են փաստա-վավերագրական ֆիլմեր:
- Շաբաթական 3 անգամ անցկացվել է մարզասարքերով թերապևտիկ մարզանք:
- 7 անգամ անցկացվել են բակային մարզանք:
- Ֆիլմի դիտում՝ 3 անգամ («Ոսկե ցլիկը», «Մենք ենք մեր սարերը», «Ես եմ», «Կովկասի գերուհին»):
- 12 շահառու շարունակել են պարբերաբար այցելել «Ացհայմերի խնամք Հայաստան» հասարակական կազմակերպության կողմից «Առողջ ուղեղի

հայկական ծրագրի» շրջանակներում կազմակերպված «Հիշողության սրճարան» ժամանցային միջոցառումներին:

- Գյումրու Կարա-Մուրզայի անվան պետական երաժշտական քոլեջ ՊՈԱԿ-ի սաները պարբերաբար իրենց երաժշտական համարներով ուրախացրել են շահառուներին:
- «Կառուցենք կամուրջներ. Հայաստանում փախստականների և տեղական համայնքների սոցիալ-տնտեսական ինտեգրում և դիմակայունության բարձրացում» ծրագրի շրջանակում հուլիսի 1-ին և 2-ին Հայկական Կարիտասի տեղահանվածների և այլ խոցելի խմբերի հետ աշխատող սոցիալական աշխատողների և ծրագրային թիմերի այլ անդամների մասնակցությամբ տեղի ունեցավ մասնագիտական այրման և երկրորդային տրավմայի կանխարգելում թեմայով երկօրյա աշխատաժողով:
- «Գործընկերություն հանուն Սյունիքի. բարելավված համայնքային սոցիալական ծառայություններ» ծրագրի շրջանակում Սյունիքի մարզում սոցիալական ծառայությունների մատուցման ենթադրամաշնորհներ ստացած ՔՀԿ-ների ներուժի զարգացման նպատակով Հայկական Կարիտասի սոցիալական ուղղորդողների կողմից Գորիս, Տաթև և Մեղրի համայնքներում կազմակերպվել են ոլորտային սոցիալական ուղղորդման հանդիպումներ՝ երեխաների և տարեցների խնամքի ուղղությամբ:
- Տարեցների ցերեկային կենտրոնի շահառուների համար կազմակերպվել է ամառանայի այցելություն Լոռու մարզ՝ գյուղ Լեռնապատի հանգստյան գոտի:
- Կարիտաս Եվրոպայի հաղորդակցության տնօրեն տիկին Սոնյա Դե Վոգտինի այցը Հայկական Կարիտասի «Տարեցների ցերեկային կենտրոն»:
- «Կառուցենք կամուրջներ. Հայաստանում փախստականների և տեղական համայնքների սոցիալ-տնտեսական ինտեգրում և դիմակայության բարձրացում» ծրագրի Աղետների ռիսկի կառավարման (ԱՌԿ) բաղադրիչի շրջանակում տեղի է ունեցել Ֆոկուս խմբային հանդիպում :

*Վերոնշյալ գործողությունների արդյունքում շահառուները սոցիալականացված են, մեկուսացված չեն, ներգրավված են տարբեր խմբակների, սոցիալական և ժամանցային միջոցառումների մեջ: Նրանք շրջապատված են խնամքով և ուշադրությամբ: Նրանց մեկուսացման և մենակության զգացումը հասցվել է նվազագույն մակարդակի:*
*Բարելավված ներառումը լայն հասարակության մեջ ակնառու է: Նրանք իրենց համարում են հասարակության լիիրավ անդամներ:*

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

- Հուլիսի 4 -«Կառուցենք կամուրջներ. Հայաստանում փախստականների և տեղական համայնքների սոցիալ-տնտեսական ինտեգրում և դիմակայունության բարձրացում» ծրագրի շրջանակում ս/թ հուլիսի 1-ին և 2-ին Հայկական Կարիտասի տեղահանվածների և այլ խոցելի խմբերի հետ աշխատող սոցիալական աշխատողների և ծրագրային թիմերի այլ անդամների մասնակցությամբ տեղի ունեցավ մասնագիտական այրման և երկրորդային տրավմայի կանխարգելում թեմայով երկօրյա աշխատաժողով:
  https://www.facebook.com/share/p/16yqkc4yEe/?mibextid=wwXIfr

- Հուլիսի 22 - «Գործընկերություն հանուն Սյունիքի. բարելավված համայնքային սոցիալական ծառայություններ» ծրագրի շրջանակում Սյունիքի մարզում սոցիալական ծառայությունների մատուցման ենթադրամաշնորհներ ստացած ՔՀԿ-ների ներուժի զարգացման նպատակով Հայկական Կարիտասի սոցիալական ուղղորդողների կողմից Գորիս, Տաթև և Մեղրի համայնքներում կազմակերպվել են ոլորտային սոցիալական ուղղորդման հանդիպումներ՝ երեխաների և տարեցների խնամքի ուղղությամբ:
  https://www.facebook.com/share/p/1Cr1rViFam/?mibextid=WC7FNe

- Հուլիսի 22 –Տարեցների ցերեկային կենտրոնի շահառուների համար կազմակերպվել է այցելություն Լոռու մարզ՝ գյուղ Լեռնապատի հանգստյան գոտի:
  https://www.facebook.com/share/p/15RX3ctSef/?mibextid=WC7FNe
- Օգոստոսի 14 – «Ստեղծագործող ձեռքեր» խմբակի աշխատանքային առօրյան:
  https://www.facebook.com/share/p/14RDLBtAR57/?mibextid=WC7FNe

- Օգոստոսի 18 - Oragir.News-ը լուսաբանել է ձեռագործ աշխատանքների խմբակների աշխատանքները:
  https://www.facebook.com/share/1YWX5cvPc5/?mibextid=WC7FNe
- Օգոստոսի 20- «Ստեղծագործող ձեռքեր» խմբակի աշխատանքային առօրյան:

https://www.facebook.com/share/r/14MozFaTjgt/?mibextid=WC7FNe

- Սեպտեմբերի 15-Կարիտաս Եվրոպայի հաղորդակցության տնօրեն տիկին Սոնյա Դե Վոգտինի այցը Հայկական Կարիտասի «Տարեցների ցերեկային կենտրոն»: https://www.facebook.com/share/p/19ei7PbPNP/?mibextid=wwXIfr

Ծրագրի շրջանակներում անցկացված միջոցառումների և իրականացված աշխատանքների վերաբերյալ անհրաժեշտ թղթաբանությունը և նկարները հավաքվում և պահպանվում են: Եռամսյակային հաշվետվությանը կից ներկայացնում ենք հաջողության պատմություն և նկարներ:

2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:

Հաշվետու ժամանակահատվածում դժվարություններ և խնդիրներ չեն առաջացել:

2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):

Հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսվում է իրականացնել՝

- Ամենօրյա ցերեկային խնամք (շաբաթական 5 օր),
- Սոցիալ-վերականգնողական օգնության տրամադրում,
- Կազմակերպվելու է տարբեր ժամանցային, ինտելեկտուալ խաղեր և միջոցառումներ,
- Կանոնավոր բժշկական ստուգումներ և հնարավոր դեղորայքով ապահովում, զանազան հիվանդությունների կանխարգելման վերաբերյալ զրույցներ, առողջ ապրելակերպին նպաստող միջոցառումներ,
- Մասնագիտական, հիշատակի և այլ տոների նշում:

2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:

- «Համով կաթ» ՍՊԸ-ի կողմից պանրի նվիրատվություն 52.8 կգ:
- Առավել կարիքավոր 15 շահառու շարունակում են անվճար օգտվել քաղաքային տրանսպորտից՝ հատուկ քարտերի միջոցով, որը տրամադրել է Գյումրու համայնքապետարանը:
- Անհատ բարերարների կողմից տարեցներին տրամադրվել է հագուստ 4 անգամ:
- Անհատ մարդկանց կողմից կենտրոնի շահառուներին 1 անգամ տրամադրվել է հյութասիրություն (մատաղ) 13 կգ:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | «Հայկական Կարիտաս» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Գլխավոր քարտուղարի փոխարինող՝ Վ. Տեր-Բալյան | Գործադիր տնօրեն՝ Գ. Տարասյան |
| ---------------------------------------- | ---------------------------------------- |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության ցերեկային կենտրոնում շահառուներին մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 46/44 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 39 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 0 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 0 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 0 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 0 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 46 |
| 2. | մեկանգամյա սննդի տրամադրում | 46 |
| 3. | կարիքի գնահատում | 46 |
| 4. | Աշխատանքային/արտթերապիայի որոշակի տեսակների կազմակերպում | 46 |
| 5. | Խմբակների կազմակերպում | 46 |
| 5.1 | Ստեղծագործող ձեռքեր | 17 |
| 5.2 | Հրաշագործները | 14 |
| 5.3 | Ֆիզ-արտ | 15 |
| 6. | Մշակութային միջոցառումների կազմակերպում | 46 |
| 6.1 | Այդ թվում՝ կենտրոնից դուրս | 40 |
| 7. | Այլ ծառայություն<br>• բուժքույրի ծառայություններ | 46 |

| | | |
|---|---|---|
| | • լվացքատան ծառայություններ<br>• լոգանքի ծառայություններ | 22<br>122 |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
Գլխավոր քարտուղարի փոխարինող՝
Վ. Տեր-Ղայան

---------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Հայկական Կարիտաս» բարեգործական հասարակական կազմակերպություն
Գործադիր տնօրեն՝ Գ. Ցարասյան

---------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.